



ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Փետրուար 2025

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փետրուարին կը նշուի Աարայրի դաշտին վրայ, 451 թուականին, «վասն հաւատքի եւ վասն հայրենիքի» նահատակուած քաջերուն յիշատակը: Փետրուար 14-ին հայ եկեղեցին կը տօնէ Տեառնընդառաջը: Այս ամսուն կը նշուի նաեւ 18 Փետրուար 1921-ին տեղի ունեցած Փետրուարեան ապստամբութիւնը: Այս դէպքերը իրարմէ դարեր հեռու ըլլալով հանդերձ, ունին նոյն նպատակը՝ պահել հայու ինքնութիւնը:

Փետրուարին կը նշուի նաեւ մայրենի լեզուի միջազգային օրը: Լեզուն ազգի մը ինքնութեան ճանաչման եւ պահպանման կարեւոր կէտերէն մէկն է: Այլ կարեւոր կէտեր են նաեւ մշակոյթի եւ ազգային աւանդութիւններու ճանաչումը, պահպանումը եւ սերունդէ սերունդ փոխանցումը:

Սիրելի պատանիներ, օրինակ քաղենք անցեալի հերոսներէն եւ պաշտպան զինուորը ըլլանք մեր հայրենիքին եւ մեր մշակոյթին, հայերէն խօսելով, հայերէն գրելով եւ հայերէն կարդալով: Սիրենք եւ գուրգուրանք մեր մայրենիին վրայ, որովհետեւ ապագային մենք պիտի ըլլանք զայն նոր սերունդներուն փոխանցողը:

Կ'ապրինք Հայաստանէն շատ հեռու. ճիգ պէտք է թափենք հայ մնալու համար: Մեր ինքնութեան պահպանութիւնը մեզմէ կախեալ է: Մնանք մօտիկ մեր եկեղեցիներուն ու կեդրոններուն, խօսինք հայերէն, ծանօթանանք մեր մշակոյթին եւ պահպանենք մեր ազգային աւանդութիւնները:

Կեցցէք եւ կեցցէ հայութիւնը:

ՊԱՇՏՊԱՆՔ ԱՐՑԱԽԸ ՄԵՐ ՍՐՏԵՐՈՒՆ ԵՒ ՄՏՔԵՐՈՒՆ ՄԷՋ

44-օրեայ պատերազմին յաջորդող շրջափակումին որպէս արդիւնք, մօտ 120,000 հայեր բռնի տեղահանուեցան իրենց դարաւոր հայրենի հողէն: Այդ ընթացքին Ատրպէյճանի կառավարութիւնը իր մօտ պահեց 16 հայ քաղաքական գործիչներ, որպէս պատանդ:

Այդ օրերէն ի վեր, Ատրպէյճան կեղծ «դատավարութիւն» կատարելով ժամանակ կ'ուզէ շահիլ, աշխարհի ուշադրութիւնը շեղելու իր կատարած անմարդկային արարքներէն:

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի կոչին ընդառաջելով, մենք ալ մեր ձայնը բարձրացնենք, նամակներ գրելով (Հորիզոն Մանկապատանեկանը պատրաստ է ձեր նամակներուն տեղ տալու) մարդոց իրաւունքները պաշտպանող այն բոլոր երկիրներուն եւ կազմակերպութիւններուն, որ պէտք եղած բոլոր քայլերը առնեն, ազատ արձակելու 16 հայ բանտարկեալները եւ հարկ եղած պատիժներ գործադրելու Ատրպէյճանի հասցէին:



ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆ

Հայաստան տակաւին նորանկախ երկիր էր, երբ 2 Դեկտեմբեր 1920-ին, անոր խորհրդայնացման պայմանագիրը ստորագրուեցաւ:

Այդ օրերուն, Հայաստանի առաջին Հանրապետութեան վերջին վարչապետ Սիմոն Վրացեանը կը հրաժարի: Հայոց բանակի սպաներ եւ հանրապետութեան ռազմական նախարար Դրաստամատ Կանայեան կ'աքսորուին երկրէն: Տազնապ կը տիրէ կառավարութեան մէջ: Հայաստան պոլշեիկներու՝ ռուս յեղափոխական կուսակցութեան անդամներու իշխանութեան տակ կ'իյնայ: Անոնք օրն ի բուն կը նեղեն եւ կը կողոպտեն հայերը, զիրենք ծուլելու նպատակով: 1921 թուականի Փետրուար ամսուն Հայաստան կ'ապրէր պոլշեիկներու տիրապետութեան իր ամէնէն մութ օրերը:



Այս պատճառով, 18 Փետրուար 1921-ին հայկական տարբեր շրջաններ իրենց հերթին ոտքի կը կանգնին ու այսպէս ծնունդ կ'առնէ ապստամբութիւնը: Մէջտեղ կու գայ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն, եւ կը հրատարակուի Հայաստանի Հանրապետութեան օրկան՝ «Ազատ Հայաստան» թերթին առաջին թիւը, «Պոլշեիկեան Իշխանութիւնը Տապալուած. Ստեղծուած է Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ. Բանտարկեալ Ընկերները Ազատուած. Կեցցէ Ազատ Անկախ Հայաստանը» վերնագրով:

Պոլշեիկներու դիմադրութիւնը կը ծախողի, եւ հայկական շրջանները կը վերագրաւուին: Բանտերուն դռները կը բացուին եւ խորհրդարանի բանտարկուած անդամները ազատ կ'արձակուին: Վերոյիշեալ թուականը կ'անուանուի «Ազատութեան օր»:

ՎԱՐԴԱՆԱՆՔ



Արշակունիներու թագաորութենէն ետք, 428 թուականին, Հայաստան ինկաւ պարսիկներուն իշխանութեան տակ: Սակայն Հայաստանը ունէր շատ զօրաւոր, ազնուական տոհմեր, որոնցմէ մէկն էր Մամիկոնեան ընտանիքը: Այս պատճառով, պարսիկները ստիպուեցան լաւ յարաբերութիւն պահել իրենց հետ եւ նշանակել զանոնք Հայաստանի կառավարիչ: Թէեւ Հայաստան մաս կը կազմէր Պարսկաստանին եւ պատերազմի ժամանակ օգտակար կ'ըլլար անոր, սակայն հայերուն համար շատ կարեւոր էր իրենց կրօնքն ու մշակոյթը, որոնց միջոցաւ անոնք աւելի կապուած էին Բիւզանդիոնին: Յազկերտ Բ. պարսիկ թագաւորի ծրագիրն էր տարածել պարսկական կայսրութիւնը եւ ծունկի բերել Բիւզանդիոնը: Այս նպատակով, 449 թուականին, ան յատուկ հրովարտակով հայերէն պահանջեց ուրանալ քրիստոնէութիւնը եւ ընդունիլ զրադաշտութիւնը:

Հայաստանի մէջ ժողով մը գումարուեցաւ մասնակցութեամբ հայ բարձրաստիճան եկեղեցականներու եւ իշխաններու: Անոնք շարադրեցին նամակ մը՝ մերժելով արքային հրահանգը: Ժողովուրդը հետեւեցաւ սպարապետ Վարդան Մամիկոնեանին:

451 թուականին գարնան, պարսիկ զօրքը մտաւ Հայաստան եւ նոյն թուականի Մայիս ամսուն հասաւ Աւարայր, ուր տեղի ունեցաւ Հայոց Պատմութեան գլխաւոր ճակատամարտերէն մէկը՝ Վարդանանց պատերազմը: Փիղերով զինուած 300,000 պարսիկ զինուորներու դէմ կռուեցան 66,000 հայեր, որոնց մաս կը կազմէին ոչ միայն զինուորներ, այլեւ գիւղացիներ եւ արհեստաւորներ: Անոնք ամբողջ ուժով կռուեցան յանուն իրենց ինքնութեան պաշտպանութեան: Վարդան Մամիկոնեանի կողքին 1036 հայեր նահատակուեցան, իսկ պարսիկները այս թիւին եռապատիկ զոհեր տուին:

Աւարայրի ճակատամարտին շնորհիւ հայ ազգը մնաց հայ, պահելով իր կրօնն ու իր ինքնութիւնը:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ

Ըստ հին հրեական օրէնքին, երեխայի մը ծնունդէն 40 օր ետք, ծնողքը զինք տաճար կը տանէր, որպէս Աստուծոյ ընծայ: Այս ասանդութեան հետեւելով, Յովսէփն ու Մարիամը Յիսուսին ծնունդէն 40 օր ետք՝ Փետրուար 14-ին, զինք տարին տաճար:

Հայ եկեղեցին այս օրը ճանչցաւ որպէս Տեառնընդառաջի տօն: Այս բառը գրաբար հայերէն բարդ բառ մըն է, որ կազմուած է «Տէր» եւ «ընդառաջ» բառերէն եւ կը նշանակէ Աստուած դիմաւորել: Այս տօնին կապուած են հին ժամանակներէ մնացած սովորութիւններ եւ հաւատալիքներ: Այսպէս օրինակ՝ տօնին նուիրուած պատարագէն ետք, հայեր եկեղեցիին բակին մէջ կրակ կը վառէին, ու բոլորը կը ցատկէին անոր վրայէն: Հոս՝ անոր նպատակը հեթանոսական չէ, այլ նուէր է Աստուծոյ: Կրակին վրայէն թօշելով՝ կ'ոտնակոխեն զայն, ցոյց տալով որ ան Աստուած չէ: Կրակը մարելէն ետք, մոխիրէն ափ մը հաւաքելով, հայեր իրենց արտերուն մէջ կը ցանէին, որպէսզի իրենց տարին ըլլայ բարեբեր, կամ այդ մոխիրով ցեխ կը պատրաստէին ու իրենց տան տանիքը կը ծեփէին, չարը հեռացնելու նպատակով:



Ներկայիս, պատարագէն ետք, հաւատացեալներ իրենց մոմերը կրակէն կը վառեն եւ տուն կը տանին, որպէսզի իրենց տուները Աստուծոյ շնորհքով լեցնեն եւ շարունակեն տարին ուրախ թափով:

ՊԵՏՐՈՍ ՂԵՒՈՆԴԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մեծ Մոռվից մինչ Հորատիզ Փառքի ճամբայ ես անցել, Ու այդ ճամբին քո համբաւից Մեր ձորերն են թնդացել:

Հրամանատար անպարտ ընկեր, Դաշնակցական քաջ զինուոր, Քո բազուկի հուժկու զարկից Թուրքն էր ընկնում ամէն օր:

Դէպ Օմար սար, դէպ մեծ ճամպագ, Դէպի կարօտ սուրբ երդում, Ուր Օմարում յաղթած վայրում Լուսէ խաչն է իր կերտում:

Հրամանատար անպարտ ընկեր, Դաշնակցական քաջ զինուոր, Քո բազուկի հուժկու զարկից Թուրքն էր ընկնում ամէն օր:

Զինուորն ընկաւ, քաջ ֆետային, Մեծ Մոռվը սարսռաց, Ու երկնքից ծմբան կէսին Անձրեւ տեղաց՝ որպէս լաց:

Գնաց Պետօն, մեծ երամին Մի նոր արծիւ միացաւ, Փանոք քեզ, Պետօ՛, փանոք երամիդ, Հայոց սրտերն դառնացան:

Դաշնակցական դու քաջ զինուոր, Հրամանատար մեր ընկեր, Քո բազուկի հուժկու զարկից Քանի թուրքեր են սատկել:

ՊԵՏՐՈՍ ՂԵՒՈՆԴԵԱՆ - ՊԵՏՕ

Փետրուար ամսուն կը յիշենք Պետրոս Ղեւոնդեանի կարճատեւ, սակայն քաջագործութեամբ լեցուն կեանքը: Պետօն ծնած է 30 Յունուար 1964-ին, Նայիրի շրջանի Պոռշեան գիւղին մէջ: Ան յաճախած է Երեւանի պետական համալսարանը եւ ուսանած՝ radiophysics ճիւղը:

1990-1994 թուականներուն Պետօ մասնակցած է Հայաստանի սահմանամերձ շրջաններու նաեւ Արցախի ինքնապաշտպանական եւ ազատագրական կռիւներուն: Ընտրուած է Արցախի հազարապետ եւ Շուշիի գումարտակի փոխհրամանատար: Այս նոր պաշտօնին բերումով ծրագրած է Օմարի լեռնանցքին գրաւումը եւ իր գումարտակով, առանց զոհ տալու իրականացուցած է զայն: Շահումեանի մէջ գրաւած է բոլորին ուշադրութիւնը, իր մարդամօտ եւ հասկցող բնաւորութեան տէր մարդ ըլլալուն: Կռիւներու ժամանակ, մահը շատ անգամ իր քովէն անցած է. ականատես եղած է իր ժողովուրդին յուսալքման եւ իր ընկերներուն նահատակութեան, բայց Պետօն երբեք չէ յուսահատած: Յաղթանակը եղած է իր կեանքի գերագոյն նպատակը:

14 Փետրուար 1994-ին, երբ Օմարի լեռան լանջերուն դիրքաւորուած մարտիկները սնունդի եւ տաք հագուստի կարիքը ունէին, Պետօն անմիջապէս ճամբայ ըլլած էր եւ փութացած՝ իր ընկերներու օգնութեան:



Ճամբուն վրայ հանդիպած էր խումբ մը հայերու, որոնց հետ կը գտնուէր լքուած հիւանդակառք մը եւ վիրաւոր զինուոր մը: Երբ իմացաւ, թէ թուրքերը ճամբան ռումբերով պատած էին եւ անկարելի էր վիրաւոր զինուորին կեանքը փրկել, անվախ Պետօ նստած էր շտապօգնութեան մեքենան: Սակայն ճամբան հիւանդատար կառքը պայթած էր եւ նահատակուած էր հայ ազգի պարծանք՝ Պետրոս Ղեւոնդեանը:

Իր խօսքերէն մէկն է. «Եթէ մեռնելու ենք, աւելի լաւ է մեռնիք կռուելով ու պատուով»:

ՎԱՐՔ ՈՒ ՎԱՐՈՒԵԼԱԿԵՐՊ

ՍՈՐՎԻՆՔ ՈՒ ԱՇԽԱՏԻՆՔ

Անահիտ Պալեան

Ամէն օր նոր բան կը սորվինք.
Շատ լաւ բան է սորվիլը:
Սորվելով
Աւելի կը գորանանք,
Աւելի ուժով
Եւ ինքնավատահ կ'ըլլանք:
Այնուհետեւ կ'ըլլանք ուրախ
Կը սիրենք կեանքը
Ու իր բոլոր բարիքները:
Վայ անոր, որ չի գիտեր անոր յարգը,
Ծոյլ է ու չի սիրեր աշխատանքը,
Կը մնայ խեղճ ու տխուր
Իր ամբողջ կեանքը:




ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԻ ՏՕՆԸ

Սուրբ Սարգիսի տօնը Հայ առաքելական եկեղեցւոյ նշած տօներէն մէկն է: Ան կը նշուի Սուրբ Զատիկէն 63 օր առաջ, Յունուար 18-ի եւ Փետրուար 23-ի միջեւ, Շաբաթ օրով: Այս տարի Սուրբ Սարգիսի տօնը կ'իյնայ Փետրուար 15-ին:

Ըստ ասանդութեան՝ Սուրբ Սարգիս Զօրավարը նահատակուեցաւ քրիստոնէական հաւատքի համար: Ան իր ունեցած հաւատքին, իր համեստութեան եւ իր արիւթեան շնորհիւ, միշտ յաղթական դուրս եկած է պատերազմներու ժամանակ: Սարգիս Զօրավար եղած է նաեւ առատաձեռն անձ: Ան միշտ օգնած է չքաւորներուն եւ այսպիսով օրինակ եղած է իր զինուորներուն:

Ժողովրդական ասանդութեան մը համաձայն կ'ըսուի, թէ Սուրբ Սարգիս սիրահարուած է յոյն թագաւորի աղջկան եւ փախցուցած է զայն: Այս պատճառով, Սուրբ Սարգիսը կը նշուի նաեւ որպէս սիրահարներու բարեխօսը:

Դժբախտաբար սակայն, Սարգիս Զօրավար կը մատնուի եւ կը ձերբակալուի պարսկական զինուորներուն մէջ քրիստոնէութիւն տարածելուն պատճառով: Ան իր զաւակին՝ Մարտիրոսին եւ իր 14 քրիստոնէայ զինուորներուն հետ կը նահատակուի:



Կ'ըսուի, թէ նահատակուելէն ետք, Սարգիսի մարմինն վրայ լոյս կը ծագի: Մեսրոպ Մաշտոց անոր մատնութիւնը կը տանի Հայաստան. կ'ամփոփէ զանոնք Կարբի (Աշտարակի շրջան) ասանին ու Դազա դաշտին մէջ եւ հոն կը հիմնէ Սուրբ Սարգիս անունով երկու եկեղեցի:

Սուրբ Սարգիսը անուանած են նաեւ «Արագահաս», որովհետեւ ան բոլորին արագ օգնութեան հասնող սուրբ մը եղած է: Ան միշտ օգնութեան հասած է նաեւ իրեն դիմող սիրահարներուն: Սուրբ Սարգիսի օրը երիտասարդներ կ'աղօթեն, որպէսզի սուրբը իրենց աղօթքները Աստուծոյ հասցնէ: Այսօր՝ շատ ժողովրդական սովորութիւններ կան այս տօնին կապուած: Սուրբ Սարգիսի տօնէն մէկ օր առաջ, Ուրբաթ գիշեր, չամուսնացած երիտասարդներ աղի բլիթ կ'ուտեն եւ կը քնանան, այն անձը, որ իրենց երագին մէջ կը յայտնուի եւ իրենց ջուր կը մատուցէ, այն անձը իրենց կեանքի ընկերը կ'ըլլայ:

ՀԱՐՑԱԶՈՅՑ ՊԱՏԱՆԻ ԳՐԱԳԷՏ ԼԻՄ ՔԵՆՏՐՈՆԵԱՆԻ ՀԵՏ

Լիմ Քէնտրոնեան կը յաճախէ Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանը: Ան 14 Դեկտեմբեր 2023-ին, երբ Դ. կարգի աշակերտուի էր, հրապարակեց իր «Journey to Royal Destiny» խորագիրով գիտաբեւեակայական գիրքը Young Author Academy հրատարակչատան կողմէ:

Ստորեւ կը ներկայացնենք «Հորիզոն» Մանկապատանեկանի կարճ հարցազրոյցը Լիմին հետ.

Հ.- Սիրելի Լիմ, ինչը կը ներշնչէ քեզ որպէս պատանի գրող:
Լ.Ք.- Զիս կը ներշնչէ այն մտածումը, թէ ժամանակ մը վերջ այս աշխարհը պիտի ձգենք ու երթանք եւ եթէ բան մը չընենք մարդիկը զարմացնող, պիտի չիշուի մեր գոյութիւնը. ուրեմն անպայման կարեւոր նկատեցի, որ անունովս բան մը ձգեմ՝ իմ գոյութեանս իբր փաստ, որպէսզի յիշուիմ գալիք սերունդներուն կողմէ:

Հ.- Ինչպէ՞ս երեակայեցի գիրքին նիւթն ու բովանդակութիւնը:
Լ.Ք.- Գիրքին նիւթն ու բովանդակութիւնը 2023-ի ամրան ընթացքին երեակայեցի, հիմնուելով իմ երազներուս եւ ամենամեծ ձգտումներուս վրայ եւ անշուշտ կարգ մը փոփոխութիւններ կատարելով անոնց վրայ՝ գրեցի այս գիրքը:

Հ.- Ո՞վ է գիրքին հեղինակ Լիմը:
Լ.Ք.- Լիմը ներկայիս 14 տարեկան (13 տարեկան՝ երբ հրատարակեցի գիրքը) լիբանանահայ պատանի հեղինակ մըն է եւ կը յաճախէ Հայկ եւ Մելանքթոն Արսլանեան ճեմարանը:

Հ.- Եթէ Լիմին հարց տանք հետեւեալ հարցումները եւ խնդրենք, որ պատասխանները մէկ կամ երկու բառով ըլլան, ինչ կ'ընէ:
Հ.- Լիբանանը կը սիրեմ:
Լ.Ք.- Լիբանանի եւ իր ժողովուրդին կապուած եմ:
Հ.- Ինքնութիւնդ հայկականն է:
Լ.Ք.- Կը սիրեմ ըսել, որ լիբանանահայ եմ:
Հ.- Արցախը հայրենիք է:
Լ.Ք.- Այո, եւ միշտ ալ պիտի ըլլայ:



Հ.- Լիբանանը կը սիրեմ:
Լ.Ք.- Լիբանանի եւ իր ժողովուրդին կապուած եմ:
Հ.- Ինքնութիւնդ հայկականն է:
Լ.Ք.- Կը սիրեմ ըսել, որ լիբանանահայ եմ:
Հ.- Արցախը հայրենիք է:
Լ.Ք.- Այո, եւ միշտ ալ պիտի ըլլայ:

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ՊԻՏԻ ՏԵՍԷ

ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան Մոնթրէալի եւ Լաւալի «Դրօ-Գետաշէն» մասնաճիւղերը շուտով պիտի հրատարակեն «Ծանօթանանք մեր հերոսներուն» գունազարդումի գիրքը:

Այս գիրքը պիտի ընդգրկէ հայ ազատամարտիկներու պատկերներ, որոնք պատանիները պիտի կարենան ներկել եւ անոնց արկածախնդրական կեանքերուն մասին սորվիլ հետաքրքրական տեղեկութիւններ: Գիրքին վերջին մասը կը պարունակէ զանազան ինքնազարգացման խաղեր հայրենիքի եւ հայ մշակոյթի մասին: Գրքոյկին նպատակն է գունազարդումի միջոցով հայ պատանիներուն մօտ արթնցնել այս հերոսներուն եւ հերոսուհիներուն ազգային արժէքները որդեգրելու փափաքը:

Յաւելեալ տեղեկութիւններու համար կրնաք այցելել Գանատայի Պատանեկան Միութեան Մոնթրէալի եւ Լաւալի մասնաճիւղերու ընկերային ցանցերը:



ԱՂԻ ԲԼԻԹ

Բաղադրութիւն
1 գաւաթ ալիւր
1 ճաշի դգալ աղ
Զուր



Պատրաստութիւն
Ալիւրը մաղել եւ խառնել աղին հետ: Աւելցնել ջուր, մինչեւ որ խմորը կարծրանայ: Խմորը պզտիկ գնդիկներու բաժնել եւ մէջտեղը կլոր բանալ կամ խմորը բանալ եւ օգտագործել սրտաձեւ կաղապար: Բլիթները շարել ափսէի վրայ եւ փուռը դնել, մինչեւ որ կարմրին:

ՃԱԿՆԴԵՂԸ

Ճակնդեղը կաղամբի ցեղին պատկանող բանջարեղեն մըն է: Առաջին տարրուան ընթացքին կը կազմուին անոր վարդակը եւ արմատները, իսկ երկրորդ տարրուան ընթացքին կը կազմուին ցողունը, ծաղիկները եւ սերմերը: Անոր սերմերը մանր են, կլոր, մուգ գոյնով: Տերեւները՝ թոյլ կտրտուած ծայրերով:

Այս բոյսին բարձրութիւնը 50-էն 150 սմ-ի միջեւ կ'ըլլայ: Անոր պարունակութիւնները հետեւեալներն են. 8,5-16,9 % չոր նիւթեր, որոնց կէսը բնական շաքար է, ապա միւս կէսը՝ C, B1 եւ B2 կենսասնիւթերը, հանքային աղեր եւ մանանեխի իւղ, որ իրեն կու տայ իր համն ու հոտը: Ճակնդեղը օգտակար է մեր սրտին եւ աչքերուն առողջութեան: Անոր հիւսիս օրինատը օգտագործումը դէմ կը դնէ տիմէնշիայի, Ալգիայմըրի եւ քաղցկեղի հիւանդութիւններուն:

Ճակնդեղը ընդհանրապէս կը բուսնի Արեւմտեան Ասիոյ եւ Եւրոպայի մէջ: Սակայն անցեալին անոնց մշակութիւնը սկիզբ առաւ Միջին Ասիոյ մէջ:



**ԳՏԻՐ ՊԱՀՈՒԱԾ
ՀԵՏԵՒԵԱԼ 15 ԲԱՌԵՐԸ**

- նորանկախ
- պայմանագիր
- ապստամբութիւն
- կրօնք
- կրակ
- հրամանատար
- գումարտակ
- բազուկ
- բարեխօս
- մասունք
- սովորութիւն
- շողգամ
- կենսասնիւթ
- ցողուն
- արժէք

Ս	Ա	Հ	Ր	Ա	Մ	Ա	Ն	Ա	Տ	Ա	Ր
Ո	Ս	Ք	Ա	Պ	Ը	Բ	Ա	Զ	Ո	Ի	Կ
Վ	Ֆ	Մ	Ա	Ս	Ո	Ի	Ն	Ք	Հ	Բ	Կ
Ո	Հ	Ց	Ր	Տ	Ր	Խ	Է	Դ	Պ	Ա	Ե
Ր	Գ	Օ	Ժ	Ա	Ս	Լ	Ն	Ճ	Ա	Ր	Ն
Ո	Ո	Ղ	Է	Մ	Կ	Ճ	Ո	Պ	Յ	Ե	Ս
Ի	Ի	Ո	Ք	Բ	Ի	Ն	Ր	Մ	Մ	Խ	Ա
Թ	Մ	Ի	Շ	Ո	Ղ	Գ	Ա	Մ	Ա	Օ	Ն
Ի	Ա	Ն	Ե	Ի	Խ	Մ	Ն	Ս	Ն	Ս	Ի
Ի	Ր	Է	Հ	Թ	Խ	Տ	Կ	Ր	Ա	Կ	Ի
Ն	Տ	Վ	Բ	Ի	Թ	Փ	Ա	Ֆ	Գ	Ճ	Թ
Ճ	Ա	Ո	Դ	Ի	Վ	Ֆ	Խ	Ճ	Ի	Ք	Տ
Լ	Կ	Ր	Օ	Ն	Ք	Է	Կ	Հ	Ր	Հ	Ր

Ո՞Վ Կ'ՈՒՋԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԷՏ

Փետրուար ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկետն է 13 Մարտ 2025: Հետեւաբար սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը, յետոյ ուղարկեցէք այդ թուղթը «Հորիզոն»ի խմբագրատուն՝

3401 Oliver Asselin
Montreal, Canada
H4J 1L5

1. Ո՞վ էր Հայաստանի Առաջին Հանրապետութեան վերջին վաչապետը:

- ա) Դրաստամատ Կանայեանը:
- բ) Սիմոն Վրացեանը:
- գ) Համօ Օհանջանեանը:
- դ) Պետրոս Ղեւոնդեանը:

2. Ո՞ր օրը ճանչցուած է որպէս «Ազատութեան օր»:

- ա) 18 Փետրուար 1921-ը:
- բ) 21 Փետրուար 1918-ն:
- գ) 18 Փետրուար 1920-ը:
- դ) 2 Դեկտեմբեր 1920-ը:

3. Ի՞նչ էր հայերուն եւ պարսիկներուն զօրքերուն թիւերուն տարբերութիւնը:

- ա) 300,000 հայեր եւ 66,000 պարսիկներ:
- բ) 33,000 հայեր եւ 600,000 պարսիկներ:
- գ) 66,000 հայեր եւ 300,000 պարսիկներ:
- դ) 60,000 հայեր եւ 330,000 պարսիկներ:

4. Ո՞ր տեղի ունեցաւ Վարդանանց ճակատամարտը:

- ա) Արարատեան դաշտին մէջ:
- բ) Աւարայրի դաշտին մէջ:
- գ) Վանի մէջ:
- դ) Շահումեանի մէջ:

5. Ե՞րբ կը տօնենք Տեառնընդառաջը:

- ա) Փետրուար 15-ին:
- բ) Փետրուար 18-ին:
- գ) Փետրուար 24-ին:
- դ) Փետրուար 14-ին:

6. Ի՞նչ կը նշանակէ «Տեառնընդառաջ» բառը:

- ա) Աստուած դիմաւորել
- բ) Աստուծոյ նուիրել

7. Ո՞ր գումարտակի փոխհրամանատարն էր Պետոն:

- ա) Շուշիի գումարտակին:
- բ) Շահումեանի գումարտակին:
- գ) Շիրակի գումարտակին:
- դ) Տաւուշի գումարտակին:

8. Ի՞նչն է սպաննուեցաւ Ս. Սարգիս զօրավարը:

- ա) Քրիստոնէութիւնը տարածելուն համար:
- բ) Քրիստոնեայ ըլլալուն համար:
- գ) Յոյն թագաւորին աղջիկը փախցնելուն համար:
- դ) Աղքատներուն օգնելուն համար:

9. Ո՞ր սկիզբ առաւ ճակնդեղի մշակութիւնը:

- ա) Արեւմտեան Ասիոյ մէջ:
- բ) Արեւմտեան Եւրոպայի մէջ:
- գ) Միջին Ասիոյ մէջ:
- դ) Միջին Եւրոպայի մէջ:

10. Ո՞ր կենսասնիւթերը կը պարունակէ ճակնդեղը:

- ա) B1 եւ B2 կենսասնիւթերը:
- բ) C եւ B1 կենսասնիւթերը:
- գ) C, B1 եւ B2 կենսասնիւթերը:
- դ) C եւ B2 կենսասնիւթերը:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Եսենիա Քելլեան
Ձեայղացք՝ Լորի Խաչերեանի